Թողարկման 15-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2008

հունվար

թիվ 1 (113)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-258-Ն ՀՀ օրենքը

4 «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-260-Ն ՀՀ օրենքը

5 «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-261-Ն ՀՀ օրենքը

5 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-263-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները արտարժույթի, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» ՍՊԸ-ն վերալիցենզավորելու, «Առաջին ապահովագրական» ՍՊԸ-ին տրամադրված ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «Աստվան» ՍՊԸ-ին տրված բրոքերային գործունեության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու և մի շարք բանկերի մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Երևան բրոքեր» ՍՊԸ-ին և մի շարք արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու և տուգանք նշանակելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 335-Ն որոշումը «Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը և պարբերականությունը» 3/06 կանոնակարգը հաստատելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 406-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 407-Ն որոշումը «Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին հաշվետվությունը և դրա ներկայացումը» կարգը հաստատելու մասին»

17 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 408-Ն որոշումը «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը հաստատելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 409-Ն որոշումը «Ապահովագրական ընկերության տնտեսական նորմատիվների և տեխնիկական պահուստների սահմանված չափերից շեղումների չափերը սահմանելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 02Ա որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 184Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 03Ա որոշումը «2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «XX դարի հայոց կաթողիկոսներ» հուշադրամի ուրվագծերը և տեխնիկական չափանիշները հաստատելու մասին»

25 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 նոյեմբերի 2004 թվականի, ՀՕ-135-Ն) 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «դրամով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով՝

«7. Անկանխիկ վճարումներ նախատեսող և գրավոր ձևով կնքված պայմանագրերում գնանշումները կարող են կատարվել արտարժույթով, եթե այդ պայմանագրերը կնքվել են իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի և իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը «համար» բառից հետո լրացնել «գնանշումներն ու» բառերով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան
4 դեկտեմբերի 2007 թ., Երևան, ՀՕ-258-Ն

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին[**]

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 դեկտեմբերի 2004 թվականի, ՀՕ-13-Ն) 3-րդ հոդվածի «դ» կետը և 20-րդ հոդվածի 2-րդ մասը «դիլերային» բառից հետո լրացնել «-բրոքերային» բառով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան
4 դեկտեմբերի 2007 թ., Երևան, ՀՕ-260-Ն

[*] *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 13-ին (ՀՀՊՏ N 62 (586), 12.12.07):
[***] *ՀՀՊՏ 2005 N 5 (377), 21.01.05:*

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին***

«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 նոյեմբերի 2004 թվականի, ՀՕ-150-Ն) 19-րդ հոդվածի 5-րդ մասը «դիլերային» բառից հետո լրացնել «-բրոքերային» բառով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան
4 դեկտեմբերի 2007 թ., Երևան, ՀՕ-261-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

*«Արժեթղթերի շուկայի մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին***

Հոդված 1. Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (11 հոկտեմբերի 2007 թվականի, ՀՕ-195-Ն) 26-րդ հոդվածի 5-րդ կետը «դիլերային» բառից հետո լրացնել «-բրոքերային» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2008 թվականի փետրվարի 29-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան
4 դեկտեմբերի 2007 թ., Երևան, ՀՕ-263-Ն

---

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2007 թվականի նոյեմբերի 13-ին (ՀՀՊՏ N 62 (586), 12.12.07):
*** *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Սև կակաչ» արտադրական կոոպերատիվին (որոշում թիվ 07Ա):
- ***Վերալիցենզավորվել է*** «Փրայմ Ինշուրընս Բրոքերս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (որոշում թիվ 20Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Առաջին ապահովագրական» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 24Ա):
- ***Դադարեցվել է*** «Աստվան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված բրոքերային գործունեության լիցենզիայի գործողությունը (որոշում թիվ 25Ա):
- ***Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Ռենեսա» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 26Ա):
- Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրության և արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու համար «Երևան բրոքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և 4 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/05Ա, 1/21Ա, 1/25Ա, 1/36Ա, 1/60Ա), 3 արտարժույթի փոխանակման կետերի՝ խախտումը 10-օրյա ժամկետում վերացնելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/29Ա, 1/37Ա, 1/43Ա), 1 արտարժույթի փոխանակման կետի՝ 1-ամսյա ժամկետում խախտումը վերացնելու հանձնարարականով (որոշում թիվ 1/32Ա), ինչպես նաև 22 արտարժույթի փոխանակման կետերի ***նշանակվել է տուգանք*** 2850000 դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/22Ա, 1/23Ա, 1/24Ա, 1/26Ա, 1/27Ա, 1/28Ա, 1/30Ա, 1/31Ա, 1/33Ա, 1/34Ա, 1/35Ա, 1/38Ա, 1/39Ա, 1/40Ա, 1/41Ա, 1/42Ա, 1/45Ա, 1/58Ա, 1/59Ա, 1/61Ա, 1/62Ա, 1/64Ա):
- ***Գրանցվել են*** «Արարատ բանկ» բաց բաժնետիրական ընկերության «Գյումրի-1» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող, ինչպես նաև «Ինեկո բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Արաբկիր» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/52Ա, 1/76Ա):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը և պարբերականությունը» 3/06 կանոնակարգը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. հոկտեմբերի 30-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 7.12.07 թ. (ՀՀԳՏ N33 (273), 17.12.07):

1. Հաստատել «Ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, ձևերը և պարբերականությունը» կանոնակարգ 3/06-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
5 նոյեմբերի 2007 թ., N 335-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 335-Ն որոշմամբ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/06

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրաեւտության տարածքում գործող ապահովագրական բրոքերային կազմակերպությունների և դրանց պատասխանատու անձանց վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նվազագույն պահանջները և հրապարակման կարգը:

2. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը հրապարակում են առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլում՝ միևչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը և (կամ) հրապարակում և օրական կտրվածքով թարմացնում են իրենց ինտերնետային կայքում:

3. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը մամուլում հրապարակելու դեպքում, հրապարակելուց հետո հնգօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) պատասխանատու ստորաբաժանմանն են ներկայացնում այդ տեղեկատվությունը պարունակող թերթի (ամսագրի) օրինակը:

4. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունը ինտերնետային կայքում տեղեկատվության հրապարակման դեպքում, ինտերնետային կայքի գործարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական բանկ է ներկայացնում ինտերնետային կայքի հասցեն: Ինտերնետային կայքի հասցեի փոփոխության դեպքում կայքի նոր հասցեն տրամադրվում է Կենտրոնական բանկին փոփոխությունից հետո՝ 5 աշխատանքային օրվա ժամկետում:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5. Ապահովագրական բրոքերային կազմակերպությունները իրենց ինտերնետային կայքում և (կամ) մամուլում հրապարակում են առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունները,

2) ապահովագրական բրոքերային կազմակերպության պատասխանատու անձանց (գործադիր տնօրեն կամ վարչության նախագահ, վարչության անդամներ, գործադիր տնօրենի տեղակալ, գլխավոր հաշվապահ, ապահովագրական բրոքերի գործառնու-

թյուններ իրականացնող ֆիզիկական անձ) ցանկը՝ ներառյալ պատասխանատու անձանց անուն, ազգանունը, ապահովագրական բրոքերային կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը, ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձի՝ Կենտրոնական բանկի ռեգիստրում գրանցման համարը,

3) ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխամասի, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հասցեն, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն,

4) Կենտրոնական բանկի ապահովագրական բրոքերային կազմակերպությունների ռեգիստրի գրանցման համարը,

5) ապահովագրական բրոքերային կազմակերպությունում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց ցանկը, մասնակցության չափը, նշանակալից մասնակիցների գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար), ինչպես նաև այն ընկերությունների ցանկը, գործունեության տեսակը, որոնց կանոնադրական կապիտալում ապահովագրական բրոքերային կազմակերպությունն ունի նշանակալից մասնակցություն, և մասնակցության չափը,

6) օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի ցանկը և (կամ) հղում դրանց դրույթներին, որոնք կարգավորում են ապահովագրական բրոքերի ծառայությունների մատուցումը,

7) ապահովագրական բրոքերային կազմակերպության լիցենզիայի համարը և սերիան:

6. Եթե ապահովագրական բրոքերային կազմակերպությունն ընդգրկված է որևէ խմբի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա հրապարակում է նաև համապատասխանաբար խմբի, միության կառուցվածքը՝ սխեմայի տեսքով, կամ հղում է տրվում համապատասխան ինտերնետային էջին, որտեղ առկա է այդ կառուցվածքի գծապատկերային (սխեմատիկ) նկարագրությունը:

7. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող (գովազդվող) տեղեկությունները չեն կարող պարունակել ապակողմնորոշող բառեր կամ արտահայտություններ:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՆՎԱՋԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները պետք է հասանելի լինեն հաճախորդների համար ապահովագրական բրոքերային կազմակերպության գլխամասային գրասենյակում, մասնաճյուղերում և ներկայացուցչություններում՝ առանձին գրքույկների կամ հաճախորդների համար հասանելի ձևով:

9. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող տեղեկություններում, ինչպես նաև տպագրված առանձին գրքույկներում պետք է առկա լինեն մատուցվող բոլոր ծառայությունների ցանկը, ինչպես նաև այն հեռախոսահամարները, որոնցով հաճախորդը կկարողանա սպառիչ տեղեկություններ ստանալ ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

10. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակված տեղեկությունները ներկայացվում են պարզ և սպառողների համար մատչելի լեզվով:

11. Ապահովագրական բրոքերային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններում առնվազն պետք է առկա լինի ապահովագրական բրոքերային կազմակերպության միջոցով ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, վերաապահովագրավճարների, վերաապահովագրողից ստացվող հատուցումների փոխանցումների իրականացման տևողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, եթե ապահովագրական բրոքերային կազմակերպությունը իրականացնում է նման գործառնություն:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ, 27-րդ, 28-րդ և 33-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի ««Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում (այսուհետ՝ կանոնակարգ 1) կատարել հետևյալ լրացումները.

1.1. կանոնակարգ 1-ի գլուխ 3-ի 9-րդ կետի գ) ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված. ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն ենթահավելված 24-ի:»:

1.2. Կանոնակարգ 1-ի գլուխ 6-ի 21-րդ կետի գ) ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված. ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն ենթահավելված 24-ի:»:

1.3. Կանոնակարգ 1-ի գլուխ 6-ի 21-րդ կետը լրացնել ժա) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժա) Հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելված 25-ի»:

1.4. Կանոնակարգ 1-ի գլուխ 7-ի 27-րդ կետի դ) ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված. ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն ենթահավելված 24-ի:»:

1.5. Կանոնակարգ 1-ի գլուխ 12-ի 85-րդ կետի գ) ենթակետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված. ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն ենթահավելված 24-ի:»:

1.6. Կանոնակարգ 1-ի գլուխ 12-ի 86-րդ կետը լրացնել գ) ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ) Հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի ենթահավելված 25-ի (միայն բանկի տարածքային ստորաբաժանման գործունեության վայրի փոփոխությունը գրանցելու դեպքում)»:

1.7. Կանոնակարգ 1-ը լրացնել ենթահավելված 24-ով և 25-ով՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
17 դեկտեմբերի 2007 թ., N 406-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.08 թ. (ՀՀԳՏ N3 (277), 29.01.08):

Հավելված

«ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թ. ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 406-Ն որոշման

Ենթահավելված 24

Համարակալված, կնքված և կարված է

_____ (_____) թերթ:
նշել թվերով նշել տառերով

ԻՎ Լիցենզավորման ու գրանցման բաժնի պետ՝

_____ _____
անուն, ազգանուն ստորագրություն

վերահսկող՝

_____ _____
անուն, ազգանուն ստորագրություն

Ենթահավելված 25

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության չափանիշները Կանոնակարգ 1-ի 13-րդ գլխով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Հավաստիացնում եմ, որ բանկի _____ մասնաճյուղի տարածքը և
նշել անվանումը
տեխնիկական հագեցվածության չափանիշները համապատասխանեցված են Կանոնակարգ 1-ի 13-րդ գլխով սահմանված պահանջներին: Հայտարարում եմ նաև, որ բանկի մասնաճյուղի տարածքի և տեխնիկական հագեցվածության չափանիշների հետ կապված փոփոխությունների դեպքերում (Կանոնակարգ 1-ի 13-րդ գլխով սահմանված պահանջներին չհակասող կատարվող և կատարվելիք փոփոխություններ) պարտավոր եմ գրավոր տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին:

Սույն հայտարարագիրը արժանահավատ է և ամբողջական: Բանկն ընդունում է, որ բանկի կողմից սույն հայտարարագրի հետ կապված ցանկացած կեղծ տեղեկատվության ներկայացումը բանկի և (կամ) բանկի ղեկավարի հանդեպ կարող են առաջացնել ՀՀ օրենքով սահմանված հետևանքներ:

Բանկի գործադիր տնօրեն՝
(վարչության նախագահ) *ստորագրություն*

կնիք

*«Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին հաշվետվությունը և դրա ներկայացումը» կարգը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին հաշվետվությունը և դրա ներկայացումը» կարգը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված հաշվետվության ձևը և դրա լրացման ցուցումները ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
17 դեկտեմբերի 2007 թ., N 407-Ն

Հավելված 1

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳԱՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերի երկրորդային շուկայում, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկի) կողմից թողարկված և Կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի երկրորդային շուկայում գործառնություններ իրականացնող գործակալների, դիլերների, գործակալ/դիլեր չհանդիսացող բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների կողմից սույն կետում նշված գործառնությունների վերաբերյալ, Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության ձևը, ներկայացման կարգն ու ժամկետները: Սույն կարգը սահմանում է նաև արժեթղթերի շուկայում գործող մասնագիտացված անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության ձևը, ներկայացման կարգն ու ժամկետները Կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած կազմակերպությունների թողարկած պարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ II. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2. Սույն կարգի 1-ին կետում նշված կազմակերպությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կարգի 1-ին կետում նշված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն ենթահավելված 1-ի:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.08 թ. (ՀՀԳՏ N3 (277), 29.01.08):


3. Սույն կարգի 1-ին կետում նշված կազմակերպությունները սույն կարգի 1-ին կետում նշված գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը Կենտրոնական բանկ են ներկայացնում էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ Սի-Բի-էյ-նեթին միացված չլինելու դեպքում՝ հաշվետվությունների ընդունման ինտերնետային համակարգով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից բանկերին ուղարկված պաշտպանված ֆայլերով («Մայքրոսոֆթ օֆիս 97» կամ դրա կատարելագործված տարբերակով), որոնք փոփոխելն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 31/01/2008):

Հաշվետվություններում տեքստային եղանակով ներկայացվող տեղեկությունները պետք է լրացվեն միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան):

4. Հաշվետվությունը մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է: Կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի տվյալ օրը ներկայացվող հաշվետվության ձևերից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն:

5. Սույն կարգի իմաստով՝ ***«պարտատոմսեր»*** են համարվում Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) պարտատոմսերը, Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերը և Կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների պարտատոմսերը: Սույն կարգի ենթահավելվածի 1-ի առաջին էջում ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածում պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված առք ու վաճառքի և ռեպո գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

6. ***«Թողարկում»*** սյունակում լրացվում է իրականացված գործարքի պարտատոմսերի գրանցման համարը:

7. ***«Գործարքը իրականացնողը»*** սյունակում առաջարկված կազմակեպությունների կոդերից ընտրվում է անհրաժեշտը, իսկ տվյալ անձի մոտ կոդի բացակայության դեպքում՝ նշված չորս տարբերակներից մեկը՝ Ներդրող-Այլ ռեզիդենտ իրավաբանական անձ, Ներդրող-Ռեզիդենտ ֆիզիկական անձ, Ներդրող-Ոչ ռեզիդենտ բանկ կամ Ներդրող-Ոչ ռեզիդենտ ոչ բանկ:

8. ***«Առք ու վաճառքի գործառնություններ»*** մասում լրացվում է առքի և վաճառքի գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը.

8.1. ***«գործարքի տեսակը»*** սյունակում պարտատոմսերի առքի գործարքի դեպքում լրացվում է «առք», պարտատոմսերի վաճառքի գործարքի դեպքում՝ «վաճառք».

8.2. ***«պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով.

8.3. ***«գործարքի գինը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի պարտատոմսերի գինը:

9. ***«տարեկան եկամտաբերությունը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի տարեկան եկամտաբերությունը՝ ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ:

10. ***«Ռեպո (հակադարձ ռեպո) գործառնություններ»*** մասում լրացվում է ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը.

10.1. ***«գործարքի տեսակը»*** սյունակում պարտատոմսերի վաճառքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ պարտատոմսերի առքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք.

10.2. ***«պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով.

10.3. ***«գործարքի գինը (ծավալը)»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի արդյունքում գործարքի կողմերից մեկից մյուսին փոխանցվող դրամական միջոցների ծավալը.

10.4. ***«ռեպո գործարքի հիմքում ընկած պարտատոմսերի գինը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի կողմերից մեկից մյուսին փոխանցվող արժեթղթերի գինը, ընդ որում, լրացվում է արժեթղթերի այն գինը, որը որոշվել է կողմերի փոխպայմանավորվածությամբ և/կամ սահմանվել է համապատասխան գործարքի պայմանագրով.

10.5. ***«ժամկետը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի ժամկետը օրերով.

10.6. ***«տարեկան ռեպո տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքի տարեկան տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

11. ***«գործարքի բնույթը»*** սյունակում նախկինում կնքված և վերակնքված կամ երկարաձգված ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների դեպքում լրացվում է՝ երկարաձգված, իսկ նոր կնքված գործարքների դեպքում՝ նոր կնքված:

12. ***«Գործարքի հակառակ կողմը»*** սյունակում առաջին մասում լրացվում են սպասարկող կազմակերպության տվյալները, իսկ երկրորդ մասում՝ գործարքի վերջնական հասցեատիրոջ տվյալները: Դրա համար առաջարկված կազմակեպությունների կոդերից ընտրվում է անհրաժեշտը, իսկ տվյալ անձի մոտ կոդի բացակայության դեպքում՝ նշված չորս տարբերակներից մեկը՝ Ներդրող-Այլ ռեզիդենտ իրավաբանական անձ, Ներդրող-Ռեզիդենտ ֆիզիկական անձ, Ներդրող-Ոչ ռեզիդենտ բանկ կամ Ներդրող-Ոչ ռեզիդենտ ոչ բանկ: Բորսայում իրականացված գործարքների դեպքում «Գործարքի հակառակ կողմը» սյունակը չի լրացվում:

13. Սույն հաշվետվության երկրորդ էջում ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ (գործողության մեջ գտնվող) ռեպո գործարքների ընդհանուր ծավալի վերաբերյալ տեղեկատվություն:

14. ***«Թողարկում»*** սյունակում լրացվում է գործարքի պարտատոմսերի գրանցման համարը:

15. ***«Գործարքը իրականացնողը»*** սյունակում առաջարկված կազմակեպությունների կոդերից ընտրվում է անհրաժեշտը, իսկ տվյալ անձի մոտ կոդի բացակայության դեպքում՝ նշված չորս տարբերակներից մեկը՝ Ներդրող-Այլ ռեզիդենտ իրավաբանական անձ, Ներդրող-Ռեզիդենտ ֆիզիկական անձ, Ներդրող-Ոչ ռեզիդենտ բանկ կամ Ներդրող-Ոչ ռեզիդենտ ոչ բանկ:

16. ***«Ռեպո (հակադարձ ռեպո) գործառնություններ»*** մասում լրացվում է գործողության մեջ գտնվող ռեպո և հակադարձ ռեպո գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը.

16.1. ***«գործարքի տեսակը»*** սյունակում պարտատոմսերի վաճառքի գործարքը՝ հետգնման պայմանով, ներկայացվում է որպես «ռեպո» գործարք, իսկ պարտատոմսերի առքի գործարքը՝ հետ վաճառելու պայմանով, լրացվում է որպես «հակադարձ ռեպո» գործարք.

16.2. ***«պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով.

16.3. ***«գործարքի գինը (ծավալը)»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի արդյունքում գործարքի կողմերից մեկից մյուսին փոխանցված դրամական միջոցների ծավալը.

16.4. ***«ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի գինը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի արդյունքում գործարքի կողմերից մեկից մյուսին փոխանցված արժեթղթերի գինը, ընդ որում, լրացվում է արժեթղթերի այն գինը, որը որոշվել է կողմերի փոխպայմանավորվածությամբ կամ սահմանվել է համապատասխան գործարքի պայմանագրով.

16.5. ***«գործարքի կնքման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի կնքման ամսաթիվը. երկարաձգված գործարքների դեպքում՝ երկարաձգման ամսաթիվը.

16.6. ***«ժամկետը»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի ժամկետը օրերով.

16.7. ***«տարեկան ռեպո տոկոսադրույք»*** սյունակում լրացվում է յուրաքանչյուր գործարքի տարեկան տոկոսադրույքը՝ ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ:

17. ***«Գործարքի հակառակ կողմը»*** սյունակում առաջին մասում լրացվում են սպասարկող կազմակերպության տվյալները, իսկ երկրորդ մասում՝ գործարքի վերջնական

հասցեատիրոջ տվյալները: Դրա համար առաջարկված կազմակերպությունների կոդերից ընտրվում է անհրաժեշտը, իսկ տվյալ անձի մոտ կոդի բացակայության դեպքում՝ նշված չորս տարբերակներից մեկը՝ Ներդրող-Այլ ռեզիդենտ իրավաբանական անձ, Ներդրող-Ռեզիդենտ ֆիզիկական անձ, Ներդրող-Ոչ ռեզիդենտ բանկ կամ Ներդրող-Ոչ ռեզիդենտ ոչ բանկ:

ԳԼՈՒԽ IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

18. Հաշվետվությունը Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման բաժին է ներկայացվում յուրաքանչյուր օր մինչև ժամը 17:00-ն՝ անկախ իրականացված գործարքների ծավալի մեծությունից:

19. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ այլ տեխնիկական թերություն:

Ենթահավելված 1
(օրական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

« __ » _____ 200_ թ. _____ և ներդրողների կողմից

ֆինանսական կազմակերպության անվանումը

պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների մասին

Գործարքի հակառակ կողմը		Ռեպո (հակադարձ ռեպո) գործառնություններ								Առք ու վաճառքի գործառնություններ				Գործարքը իրականացնողը	Թողարկում
ընդհանուր վճարման նախիմոտիո	գործարքի վճարման	գործարքի վճարման	ժամկետը (օր)	ռեպո գործարքի վերադարձման վճարման գումարը	գործարքի վճարման (%)	ռեպո գործարքի վերադարձման ամսաթիվը	ռեպո գործարքի վճարման ամսաթիվը	գործարքի վճարման	ժամկետը (օր)	առք ու վաճառքի վերադարձման ամսաթիվը	առք ու վաճառքի վճարման ամսաթիվը	գործարքի վճարման	ընդհանուր վճարման նախիմոտիո		

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«___» _____200_թ. _____ և ներդրողների կողմից

ֆինանսական կազմակերպության անվանումը

ռեպո գործարքների մասին

Թողարկում	Գործարքը իրականացնող	Ռեպո (հակադարձ ռեպո) գործառնություններ							Գործարքի հակառակ կողմը	
		գործարքի կնքման տվյալներ	գործարքի կնքման ամսաթիվ և ժամը	գործարքի վերջնաժամկետ (ամսաթիվ)	ռեպո գործարքի կնքման գինը (տոկոսադրույքի չափը)	գործարքի կնքման ամսաթիվ	ժամկետը (օր)	ներդրումային միջոցների տեսակը	անվանումը կամ անհատականացման տվյալները	գործարքի կնքման վայրը

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը, 54-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը և 20-րդ հոդվածի «ե» ենթակետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.08 թ. (ՀՀԳՏ N3 (277), 29.01.08):

1. Հաստատել «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
17 դեկտեմբերի 2007 թ., N 408-Ն

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 408-Ն որոշման

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ , ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՁԵՎԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/07

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթների ցանկը, ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով գործառույթների պատվիրակման համար նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները:

2. Ապահովագրական ընկերությունները ապահովագական գործառույթների պատվիրակման պայմանագրով կարող են պատվիրակել՝

1) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված գործառույթները,

2) ապահովագրության օբյեկտի զննումը և (կամ) դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու հնարավորության գնահատումը:

ԳԼՈՒԽ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՁԵՎԸ

3. Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով գործառույթների պատվիրակման համար ապահովագրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նախնական թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

1) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով գործառույթների պատվիրակման համար թույլտվություն ստանալու դիմում (համաձայն սույն Հավելվածի ձև 1-ի),

2) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները, ընդ որում՝

ա. կոնտրագենտի իրավական կարգավիճակի մասին տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն սույն Հավելվածի ձև 2-ի.

բ. ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով փոխանցվող գործառնությունների մասին տեղեկատվությունը՝ համաձայն սույն Հավելվածի ձև 1-ի.

գ. կոնտրագենտի վերջին երեք տարվա ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունները.

դ. կոնտրագենտի վերջին երեք տարվա ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունները չեն ներկայացվում, եթե կոնտրագենտը հանդիսանում է աուդիտ իրականացնող անձ.

ե. ռեզիդենտ կոնտրագենտի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների, իսկ ոչ ռեզիդենտ կոնտրագետինը՝ համաձայն միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների,

3) տեղեկանք՝ տրված պետական լիազորված մարմնի կողմից՝ դատարանի որոշման բացակայության մասին, համաձայն որի կոնտրագենտը ճանաչվել է սնանկ կամ անվճարունակ: Օտարերկրյա իրավաբանական անձի կողմից ներկայացվում է տեղեկանք՝ տրված նրա գրանցման երկրում նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից, այդպիսի մարմնի առկայության դեպքում: Սույն ենթակետը չի տարածվում Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կոնտրագենտների վրա,

4) ոչ ռեզիդենտ կոնտրագենտների պարագայում՝ հայտարարություն, որ պատվիրակվող գործառույթները իրականացնելու համար կոնտրագենտի երկրի օրենսդրությամբ լիցենզիա կամ հատուկ այլ թույլտվություն չի պահանջվում, իսկ պահանջվելու դեպքում՝ այդ լիցենզիայի կամ թույլտվության առկայությունը հավաստող փաստաթղթեր,

5) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրի պատճենը,

6) ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրում նշված չլինելու դեպքում՝ ապահովագրական գործառույթների պատվիրակման ժամկետը:

4. Կենտրոնական բանկը կարող է ապահովագրական ընկերությունից պահանջել ապահովագրական գործառույթների պատվիրակման վերաբերյալ այլ տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը հաստատելու համար:

5. Կենտրոնական բանկը կարող է պահանջել կոնտրագենտի կանոնադրությունը՝ հաստատված իրավասու մարմնի կողմից, եթե Կենտրոնական բանկը կասկածներ ունի Կոնտրագենտի կողմից պատվիրակվող գործառույթների կատարման իրավասության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Ապահովագրական գործառույթների պատվիրակման համար Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունն ստանալու համար ապահովագրական ընկերությունից սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ստանալուց հետո Կենտրոնական բանկը՝ Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի գրությամբ, 30-օրյա ժամկետում տալիս է ապահովագրական գործառույթների պատվիրակման թույլտվություն կամ մերժում է այն: 30-օրյա ժամկետում, եթե ապահովագրական ընկերությունը չի ստանում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության պետի գրությունը՝ ապահովագրական գործառույթների պատվիրակման համար նախնական թույլտվություն տալու կամ մերժելու վերաբերյալ, նախնական թույլտվությունը համարվում է ստացված:

7. Կենտրոնական բանկը թույլատրում է ապահովագրական գործառույթների պատվիրակումը, եթե առկա չեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերը և ներկայացված փաստաթղթերը կեղծ և (կամ) թերի չեն, կամ դրանցում չեն արտացոլվել անարժանահավատ և (կամ) կեղծ տվյալներ:

Հավելված 1
«Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ի Հավելվածի

Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Դ Ի Մ Ու Մ

ապահովագրական գործառույթների պատվիրակման համար նախնական թույլտվություն ստանալու

Հարգելի _____

_____ և

(ապահովագրական ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

_____

(կոնտրագենտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

միջև կնքված ապահովագրական գործառույթների պատվիրակման _____ 200_ թ. թիվ __ պայմանագրով

_____ պատվիրակվել է (են) _____

(կոնտրագենտի անվանումը) *(ապահովագրական ընկերության անվանումը)*

հետևյալ գործառույթները (նշել միայն պատվիրակվող գործառույթները)՝

- ապահովագրական միջնորդային գործունեության հետ կապված ապահովագրական գործակալության ծառայությունները.
- ներդրումների կամ ակտիվների կառավարումը.
- ապահովագրության պայմանագրերից բխող վնասների գնահատման, փոխհատուցման կամ վնասի վերականգնման գործերի վարումը.
- հաշվապահական հաշվառման վարումը.
- ապահովագրական օբյեկտի արժեքի գնահատումը.
- ակտուարի գործառույթները.
- ապահովագրության օբյեկտի զննումը և (կամ) դեպքի կամ իրադարձության տեղի ունենալու հնարավորության գնահատումը:

Համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի «Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» թիվ 408-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 3/07-ի՝ կից ներկայացնում ենք ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով գործառույթների պատվիրակման համար թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

Խնդրում ենք Ձեր թույլտվությունը:

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Առդիր՝ _____ էջ:

Դիմումը ներկայացնող անձ՝

_____

(կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

(հեռախոսը, բնակության (գտնվելու) վայրը)

«__» _____ 200_ թ.

Ձև 2

«Ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրով պատվիրակման ենթակա գործառույթները, ապահովագրական գործառույթների պատվիրակման նախնական թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը և նախնական թույլտվություն ստանալու կարգը և պայմանները» կանոնակարգ 3/07-ի Հավելվածի

Կենտրոնական բանկի նախագահի
_____ -ին

ՏԵՂԵԿԱՆՔ

կոնտրագենտի իրավական կարգավիճակի մասին

Իրավաբանական անձ - կոնտրագենտի (կազմակերպության) տվյալներ
1. Անվանումը 2. Գտնվելու վայրը/հարկ վճարողի հաշվառման համար (ռեզիդենտների համար) 3.Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ *օր/ամիս/տարի* _____ 4. Կազմակերպության գործունեության բնույթը, առկա լիցենզիաները, այլ թույլտվությունները

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Կոնտրագենտ ընկերության իրավասու անձ՝_____

(կոնտրագենտի անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

(հեռախոս, հասցե)

«__» _____ 200_ թ.

*Ապահովագրական ընկերության տնտեսական նորմատիվների և տեխնիկական պահուստների սահմանված չափերից շեղումների չափերը սահմանելու մասին**

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ապահովագրական ընկերության նկատմամբ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը, որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել տնտեսական նորմատիվների կամ տեխնիկական պահուստների սահմանված չափերից նշանակալից շեղումների առկայության դեպքում:

2. Նշանակալից շեղում է համարվում տնտեսական նորմատիվի կամ տեխնիկական պահուստի նորմատիվ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափերից 10 և ավելի տոկոսի չափով նվազումը (բացառությամբ ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի նորմատիվի, առանձին վերցված ակտիվների համարժեքության նորմատիվի):

3. Ստանձնած ապահովագրական ռիսկերի գծով առավելագույն չափի նորմատիվի գծով նշանակալից շեղում է համարվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված առավելագույն չափից 10 և ավելի տոկոսի (մեկ և ավելի տոկոսային կետի) չափով գերազանցելը:

4. Առանձին վերցված ակտիվների համարժեքության նորմատիվի գծով նշանակալից շեղում է համարվում ապահովագրական ընկերության տեխնիկական պահուստների հաշրագումարից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ի իմաստով տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների հաշրագումարը 10 և ավելի տոկոսի չափով պակաս լինելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
17 դեկտեմբերի 2007 թ., N 409-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի թիվ 184Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի «2008-2009 թվականների Հայաստանի Հանրապետության հուշադրամների թողարկման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 184Ա որոշմամբ հաստատված 2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրում (այսուհետև՝ Ծրագիր) կատարել հետևյալ լրացումները.

1.1. Ծրագիրը լրացնել 9-րդ կետով.

«9. Միջազգային դրամագիտական ծրագիր «Կենդանակերպի նշաններ» (12 թողարկում) - ոսկի»:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թ. դեկտեմբերի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.08 թ. (ՀՀԳՏ N3 (277), 29.01.08):

1.2. Ծրագրի 9-րդ կետը լրացնել հետևյալ ենթակետերով.

9.1. Խեցգետին

9.2. Առյուծ

9.3. Կույս

9.4. Կշեռք

9.5. Կարիճ

9.6. Աղեղնավոր

9.7. Այծեղջյուր

9.8. Ջրհոս

9.9. Ձկներ

9.10. Խոյ

9.11. Ցուլ

9.12. Երկվորյակներ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
15 հունվարի 2008 թ., N 02Ա

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «XX դարի հայոց կաթողիկոսներ» հուշադրամի ուրվագծերը և տեխնիկական չափանիշները հաստատելու մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հունիսի 26-ի «2008-2009 թվականների հուշադրամների թողարկման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 184Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «XX դարի հայոց կաթողիկոսներ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը և տեխնիկական չափանիշները՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
15 հունվարի 2008 թ., N 03Ա

Հավելված

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի հունվարի 15-ի թիվ 3Ա որոշման

XX ԴԱՐԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ





XX դարի հայոց կաթողիկոսներ	Անվանական արժեքը	Մետաղը և հարգը	Քաշը	Տրամագիծը	Դրամաշուրթը	Որակը	Տպաքանակը
	1000000 դրամ	ոսկի, 999^0	1000,0 ± 0,5 գ	90,0 ± 0,6 մմ	հարթ	պրուֆ	25

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի փետրվարի 4-ի նիստի «2008 թվականի փետրվար ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի փետրվար ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստի արձանագրություն 28

Իրական հատվածի ցուցանիշներ 32

Պետական բյուջեի ցուցանիշներ 35

Արտաքին հատվածի ցուցանիշներ 36

Դրամավարկային ցուցանիշներ 38

Ֆինանսական շուկա 50

Վարկային ներդրումներ 68

Առևտրային բանկերի ավանդներ 79

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 81

Վճարահաշվարկային համակարգ 85

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(04.02.2008)

2008 թվականի փետրվար ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2008 թվականի փետրվարի 4-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա.Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Վ.Գաբրիելյանը, Ա.Նորեկյանը:

